ԳՐԱԿԱՆ ՑԵՐԵԿՈՒՅԹ
ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Ներսես Վանական. այս անվամբ է գրականասեր հասարակայնությանը ներկայանում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ, սակայն այսօր արդեն սիրված ու ճանաչված բանաստեղծ գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը:

Հունիսի 14-ին Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում անցկացվող հերթական գրական ցերեկույթը, որ կազմակերպել էին ճեմարանի տեսչությունը և սաները, նվիրված էր հենց սիրված դասախոսի ու բանաստեղծի, ինչպես նաև մեծահարգ հոգևորականի հոգևոր գործունեության 35-ամյակին:

Ճեմարանի հանդիսությունների սրահում ներկա էին Մայր Աթոռիս հոգևորականներ, գրականագետներ, գրչակիցներ, ասմունքողներ, ընթերցողներ, ճեմարանականներ:

Բացելով հանդիսությունը՝ ճեմարանի տեսուչ հոգեշնորհ Տ. Հայկազուն ծայրագույն վրդ. Նաջարյանը ներկաներին հակիրն ծանոթացրեց սրբազան հոր կենսագրությանը, հոգևոր և գրական գործունեությանը:

Ապա Ներսես Վանականին ողջունեց և ստեղծագործությունների վերլուծությամբ հանդես եկավ բանաստեղծ Լևոն Միրիջանյանը՝ նշելով, որ «Ներսես Վանականի լայնածիր և ընդգրկուն ստեղծագործական աշխարհն իր մեջ հավասարապես ներառել է և՝ հայրենասիրական, և՝ հոգևոր, և՝ մայրական, և՝ սիրո մոտիվները, կյանքի անցողիկության մասին խոհափիլիսոփայական ստեղծագործությունները, այդ ամենի կողքին նաև՝ բարձրարժեք թարգմանությունները»:

Բանաստեղծ-հոգևորականի գրական ողջ ժառանգության հանգամանալից վերլուծությամբ հանդես եկավ գրականագետ Վազգեն Մնացականյանը՝ շեշտելով, որ Ներսես Վանականը բանաստեղծ է աղոթքի մեջ և աղոթող՝ բանաստեղծության մեջ:

Ընթերցվեցին նաև սիրված բանաստեղծություններ: Ներսես Սրբազանի հոգու թռիչքն ու երազանքը պարագրող բանաստեղծություններից շատերի բառերով այսօր գրվել են երգեր, որոնք այնքան ջերմ են ու սիրելի: Այդ երգերից մի քանիսի կատարմամբ հանդես եկավ հոգեշնորհ Տ. Անուշավան արեղա ժամկոչյանը:

Վերջում Ներսես Վանականն իր երախտիքի ու շնորհակալության ջերմ խոսքերն ուղղեց թե՛ միջոցառման կազմակերպիչներին և թե՛ ներկաներին: